

ՏԻԳՐԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ ՐԱՆԱԳԵՏ-ՐԱՆԱՀԱՎԱՔ

ՍՎՆՏԻԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տիգրան Նավասարդյանը ծնվել է Վաղարշապատում, 1861 թ. փետրվարի 7-ին¹, 1873 թ. նա որպես որդեգիր ընդունվում է Ներսիսյան դպրոցը:

Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներից էլ ձևավորվում են Նավասարդյանի հասարակական-քաղաքական հայացքները: Այստեղ նա ուշի-ուշով կարդում է ռուսական հեղափոխական մաքի ավանգարդ՝ «Современник»-ում և «Отечественные записки»-ում, ինչպես նաև «Հյուսիսափայլում», «Մշակում» և «Փորձում» տպագրվող հոդվածները: Տ. Նավասարդյանը մասնակցում է աշակերտական գաղտնի հավաքներին, արձագանքում ժամանակի հասարակական մտքի առաջավոր գործիչների հայրենասիրական և աղդային-ազատագրական գաղափարներին: Նավասարդյանին ժամանակակից Փիրումյանը վկայում է, որ 1876 թ. ամեն օր ժանդարմերիայի սպաներ էին դալիս Ներսիսյան դպրոցի այն ժամանակվա տեսուչ Արշակ Նահապետյանի գրասենյակը և մանրամասն տեղեկություններ պահանջում «հակապետական ուղղություն» ունեցող երրորդ դասարանի աշակերտ, «մեր ապագա հեքիաթաբան» Նավասարդյանի անցյալ և ժամանակակից կյանքի մասին²: Դա այն շրջանն էր, երբ հայ որոշ մտավորականների մոտ ձևավորվում էր «դեպի գյուղ» նշանաբանով շարժումը: Նման գաղափարներով տարված Ներսիսյան դպրոցի 3-րդ դասարանի սան Տիգրան Նավասարդյանը նամակներով խնդրում է իր բարերարին՝ Բագրատ Նավասարդյանին, օգնել իրեն վերադառնալու Հայաստան, հաղորդակից լինելու հարազատ ժողովրդի հոգսերին. «Թողեք գնամ իմ սիրելի Հայաստանի նեղ օրին մասնակից ըլնեմ: Հայաստանը, իմ քաղցր Հայաստանը, մագնիսական զորություն է ինձ դեպի իրեն է քաշում: Մտքերել է իմ մատաղ սրտի մեջ անհանգչելի կրակը ազգասիրական և կանչում է իր մոտ: Չեմ կարող չլսել նրա խոսքին»³: Իր ժողովրդի ճակատագրով մտահոգված պատանու նպատակն էր կորստից փրկել հայրենի Վաղարշապատի ու Հայաստանի այլ գավառների մտավոր ու հոգևոր հարուստությունները. «Ինչ որ ժողովրդի բերանում ավանդությամբ մինչև այժմ մնացել է ու ժամանակի կոպիտ ժանիքներին պիտի կու գնա, հարկավոր է շուտ ազատել նրան այդ դառնալի կորստից: Այդ ես եմ հանձն առնում, չնայելով շատ անպատրաստ եմ դրա համար, բայց հույս ունեմ, որ այժմ ինձ կօգնեն այս սուրբ գործում»⁴:

1 Բագրատ Նավասարդյանի վկայությամբ՝ Տիգրանը Ներսես Աշտարակեցու քրոջ՝ Աննայի, թոռն է (Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Բ. Նավասարդյանի ֆոնդ, № 10—3-րդ):

2 «Մարտակոչ», 1927, № 85:

3 ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, № 249:

4 Նույն տեղում:

1876 թ. սկսած՝ արձակուրդներին Նավասարդյանը Վաղարշապատում ձեռնամուխ է լինում բանահավաքչական աշխատանքների, որ և հետագայում դառնում է նրա ամենասիրած զբաղմունքը: 1878 թ. փետրվարի 21-ի Բ. Նավասարդյանին գրած նամակից երևում է, որ պատանի Տիգրանին հալածում էին դպրոցում: «Տեսուչը ամեն օր հարց ու փորձ է անում: Ես ազատություն եմ սիրել, ոչ թե ստրկություն: Լավ է ազատ մեռնել, քան թե ամեն րոպե կասկածելու երկյուղ կրել»⁵:

1879 թ. ոստիկանները ներխուժում են Նավասարդյանի բնակարանը և «Հյուսիսափայլի» 1864 թ. համարներից մեկը ձեռքին՝ կալանավորում նրան: Որպես քաղաքական հանցագործ նա արտաքսվում է Ներսիսյան դպրոցից և բանտարկվում Մետեխի բանտում: Փոխարքայի կարգադրությամբ Նավասարդյանը դատապարտվում է 6-ամսյա բանտարկության: Նա մեղադրվում էր Միքայել Նալբանդյանի «Վիմագրական պատկերը տպելու և այն 500 օրինակ Ազատն աստված» երգի հետ տարածելու համար»⁶:

Բ. Նավասարդյանը ջանք չի խնայում Տիգրանին բանտից ազատելու համար: Եվ ահա բժիշկ Մարդարյանի միջնորդությամբ նրան տեղափոխում են հոգեբուժարան. բանտից ազատվելու միակ ելքը այդ էր: Հոգեբուժարանում Նավասարդյանի համար համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում: Այստեղ նա թարգմանում է Ֆրանց Հոֆմանի «Ձևով ծածկվածները» մանկական ստեղծագործությունը, «Սիվիլիզ-Ռիլեր» ծածկանվամբ, գրում «Իմ բանտերը» հուշիկները, ապա շարադրում է իր «Հիշատակարանը», որը նրա անմիջական ապրումների ու տրամադրությունների տարեգրությունն է:

1880 թ. հոգեբուժարանից դուրս գալուց հետո Նավասարդյանը դարձյալ զբաղվում է բանահավաքչությամբ: 1881 թ. նա ձեռնամուխ է լինում իր և ուրիշների հավաքած բանահյուսական հուշարձանների հրատարակչական աշխատանքներին: 1882—1903 թթ. Տ. Նավասարդյանը հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթների» տասը գիրք և «Հայ ժողովրդական ավանդություններ» խորագրով բանահյուսական ժողովածուն:

1885 թ. Նավասարդյանը մեկնում է Ժնև՝ բարձրագույն կրթություն ստանալու: Ինժեների մասնագիտությամբ նա 1888 թ. Ժնևից վերադառնում է Թիֆլիս և երկար տարիներ աշխատում քաղաքային ջրմուղում: Թիֆլիսում Նավասարդյանը նորից է ձեռնամուխ լինում բանահավաքչական-հրատարակչական աշխատանքների, Մ. Վարդանյանի տպարանում անձամբ շարում իր կազմած հեքիաթների ժողովածուների մեծ մասը:

Տիգրան Նավասարդյանը մահացել է 1927 թ. ապրիլի 12-ին, Թիֆլիսում և թաղվել է Խոջիվանքի գերեզմանատանը:

Տիգրան Նավասարդյանի ժողովրդագիտական գործունեությունը սկսվում է XIX դ. 70—80-ական թվականներից, երբ աճում էր հայ մտավորականության հետաքրքրությունը ժողովրդական բառ ու բանի, սովորությունների նկատմամբ: Գավառն ու գյուղը դառնում էին սիրելի վայրեր, հեքիաթասաց ծերունին՝ հարգված մարդ, մայրական օրորները, ճախարակ մանող գեղջկուհու երգերն ու մաճկալի հորովելը՝ նվիրական գանձեր: Այդ ամենը կապված էին XIX դ. երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումների վերելքի և ազ-

⁵ Նույն տեղում, № 244—2-րդ:

⁶ ՀՀՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Տ. Նավասարդյանի ֆոնդ, FB I, 2687:

դային ինքնագիտակցության զարթոնքի հետ. «Պետք է հայ ժողովրդի բանաստեղծական երևակայության և մտքի պտուղները ազատել ծախիչ ժամանակի ճիրաններից»⁷։ Մեկ այլ հետազոտողի հավաստմամբ՝ անհրաժեշտ էր «ուսումնասիրել... գյուղացու կյանքը, ճանաչել նորան, ճանաչել նորա բնակած աշխարհը»⁸։ Իսկ ճանաչելու համար պետք էր գնալ գավառ ու գյուղ, մոտիկից հաղորդակից լինել գյուղացու վիշտ ու ցավին, դարմանել նրա վերքերը, «նստել նորա կրակարանի կողքին, ուտել նորա արյան քրտինքով պատրաստած հացը, խոսել նորա լեզվով»⁹։ Այս էր ժամանակի պահանջը։

Մեզանում ևս ժողովրդական խոսք ու զրույցի իսկական գնահատումը, բանահավաքումն ու ուսումնասիրությունը սկսվում է XIX դ. առաջին տասնամյակներից։ «Մի շրջան էր դա, երբ ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսումնասիրման հարցերը սերտորեն միաձուլվում էին տվյալ ժողովրդի ազգային ինքնաճանաչման և նրա զարգացման պատմական ուղու կարևոր խնդիրների հետ»¹⁰։

Հայ ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսումնասիրման բուն պատմությունը, սակայն, սկսվում է անցյալ դարի 70-ական թվականներից, երբ հանդես են գալիս փորձառու բանահավաքներ, մամուլը հեղեղվում է բանահյուսական նյութերով, պարբերաբար հրատարակվում են ժողովածուներ։ Բանահավաքչությունը դառնում է հատուկ բնագավառ։ Բանահյուսության պատմության այս տեղաշարժի հիմնադիրը Գարեգին Սրվանձտյանն էր։ Նրանով «փաստորեն սկսվում է ժողովրդական կենդանի բանահյուսության նմուշների հավաքումն ու հետազոտությունը»¹¹։

1870-ական թվականներին, երբ Գարեգին Սրվանձտյանը զբաղված էր իր հավաքած բանահյուսական և ազգագրական նյութերի հրատարակման գործով, գրեթե նույն շրջանում բանահավաքչական աշխատանքների է ձեռնամուխ լինում Տիգրան Նավասարդյանը։

Նրա ժողովրդագիտական հավատամքը լավագույնս դրսևորվել է «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին պրակի նախաբանում։ Բանահյուսական հուշարձանների կուտուր-պատմական կարևոր արժեքի և դրանց անդառնալի կորստյան վտանգի գիտակցումն է եղել նրա նախաձեռնած գործի դրդապատճառը։ Խոսելով հնագիտական հուշարձանների պատմական արժեքի մասին, Նավասարդյանը նույնքան կարևոր է համարում նաև ժողովրդական բանավոր ստեղծագործությունը. «...Ոչ պակաս հնագիտական նյութ են և մի ազգի՝ ժողովրդյան, այսպես ասած խոսուն հնությունները, որոնք իբրև նորա մտքի և երևակայության ծնունդ, նորա անցյալ կյանքի, մտավոր զարգացման կենդանի պատկերներն են արտացոլում իրանց մեջ։ Այդ հնությունները ժողովրդյան բանավոր վեպերն են, հեքիաթները, ազգային հին երգերը, առակները, հանելուկները, շուտասելուկները, օրհնությունները և այլն, որոնք իբրև սրբազան ժառանգություն, դարերից հետո, բերան-բերան հասել են մինչև մեր օրերը։

⁷ «Արձագանք», 1893, էջ 3։

⁸ Արսեն Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 3։

⁹ Նույն տեղում, էջ 11։

¹⁰ Արամ Ղաևալանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, պրակ Ա, 1945, էջ 12։

¹¹ Ս. Հարությունյան, Մանուկ Աբեղյան, Երևան, 1970, էջ 148։

Հայերիս մեջ, ցավոք սրտի, պետք է ասել, նոքա դեռեւս ուսմիկ դասի սեփականութիւնն են, որոնք, հետզհետեւ, զոհ են դառնում ժամանակի անգութ ժանիքներին: Ահա այդ աչքի առաջ ունենալով, այս մի քանի տարի շարունակ իմ թույլ ուժերը նվիրել եմ և այսուհետեւ էլ նվիրելու եմ այդ նպատակին ծառայելուն»¹²:

Իր նախաձեռնած գործի այս ճիշտ գիտակցումը Նավասարդյանին մղում է ամենայն ջանք գործադրել առաջադիր նպատակը իրագործելու համար: Նյութական միջոցներ ստանալով բժիշկ Բ. Նավասարդյանից, Գ. Արծրունուց, ինժեներ Ա. Սասյանից, Բաքվի գիմնազիայի մի խումբ հայ ուսանողներից, Առաքել Մատուրյանից և ուրիշներից, Նավասարդյանը բանահաւան և ազգագրական նյութեր հավաքելու, տեղում «ձեռնհաս անձանց» բանահավաքչական աշխատանքների մեջ ընդգրկելու նպատակով ճամփորդում է Վաղարշապատ, Գանձակ, Նոր Բայազետ և այլուր: Նա միաժամանակ նամակներով, մամուլում հրապարակած ազդերով ոգեշնչում և քաջալերում է հայ մտավորականներին՝ հավաքելու և կորստից փրկելու մեր ժողովրդի բանավոր ստեղծագործութիւնները:

Ոգեշնչված Տ. Նավասարդյանի գործունեութեամբ, բազմաթիւ հայ մտավորականներ հետևում են նրա օրինակին և Հայաստանի տարբեր գավառներից գրառում բանահաւանական բազմաթանր նյութեր: Բանահավաքից պահանջվում էին մեծ քանքեր, համբերութիւն, զրկանքներ: Ժողովուրդը նրանց վրա նայում էր իբրև պետական պաշտոնյայի¹³: «Առհասարակ ժողովուրդը սաստիկ վախենում է գրչից, հենց որ նրա աչքի առջև մի բան գրում ես, նա սարսափում է: Ինձ շատ անգամ առաջարկում էին այսպիսի հարցեր, «Աղա, դրանից խո մեզ վնաս չի լինի»¹⁴:

Տիրաւորական իրաւունք միաժամանակ աշխատում էր հավաքված նյութերը հրապարակել: Հայ մտավորականներն իրենց կազմած բանահաւանական և ազգագրական ձեռագիր ժողովածուներն այդ նպատակով սիրահոժար ուղարկում են Տ. Նավասարդյանին¹⁵:

12 Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1882, էջ 1:

13 Բնորոշ է այդ առումով Մարտիրոս Ծախկոպոսյանի նամակը ուղղված Նավասարդյանին. «Մեկ տետրակը հանձնել եմ մեր գյուղացի մի տղայի, որ նա էլ աշխատի: Չովդառ գյուղում գրելով ժողովրդական մի քանի անեծքներ, առածներ, բռնում են խեղճին և սաստիկ շարշարում, երբեմն հարկանելով, երբեմն թքանելով երեսին և ասելով. աղա, դու մեր պիսիրն ես, մեր ագլակատն ես, մեր պրիստավն ես, հա... Կարող եմ ասել, որ հրեաները Քրիստոսին այնքան չեն շարշարել, որքան չովդառեցին մեր խեղճ Հարութիւն Մալխասյանին» (ՀՄՄՀ ԳԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի հայ ժողովրդական բանահաւանութեան արխիւ, Տ. Նավասարդյանի ֆոնդ, FBI, 1827):

14 Բ ֆ ֆ ի, Խամսայի մելիքութիւններ, Երևան, 1959, էջ 376:

15 Տպագրութեան համար նյութեր են տրամադրում Տփղիսից՝ բժիշկ Բ. Նավասարդյանը, Ա. Բահաթրյանը, Ալ. Թայիրյանը, Գյուտ Աղանյանցը, Գ. Մանգակունին, Երևանից՝ Ա. Աթանասյանը, Ս. Գրիգորյանը, Վաղարշապատից՝ Հ. Աղաղադյանը, Ն. Համբարձումյանը, Իգդիրից՝ Սաթենիկ Մելիք-Ալվադյան-Պաշլուկունին, Ջաբրայիլ, Կարսից՝ Հովհաննես Գաղանճյանը, Ախալցխայից՝ Շուշանիկ Համբարձումյանը, Շուշիից՝ Հ. Խոջամիրյանը, Ղարաբաղի նոր Շենից՝ Պ. Հովհաննիսյանը, Նուխիից՝ Ն. Խոջամիրյանը, Գանձակից՝ քահանա Գ. Բաբաբլախյանը, պ. Հ. Լիսիկյանը, Ա. Մատինյանը, Գ. Շերմաղանյանը, Չարդախլուից՝ պ. Մանասյանը, Նոր Բայազետից՝ պ. Գ. Շերենցը, Շնոգից՝ պ. Հ. Մաթինյանը: Պերճ Պոռչյանը Նավասարդյանին է տրամադրում Ալաշկերտում Պողոս Մուրադյանի գրառած բազմաքանակ նյութերը, Մանուկ Աբեղյանը՝ Աստապատում իր հավաքածները:

Բազմաժանր նյութերի մի պատկանելի հավաքածու ունենալուց հետո Տ. Նավասարդյանը մերթ իր շնչին միջոցներով, մերթ էլ անձամբ շարելով հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթների» տասը գիրք և «Հայ ժողովրդական ավանդություններ» ժողովածուն:

1881 թ. «Արարատ» ամսագրի 11, 1882 թ. 1, 2, 3, 4 համարներում նախապես տպագրելով իր ժողոված արարատյան բարբառով ժողովրդական մի շարք հեքիաթներ, նա առանձին ժողովածուով հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին դիրքը¹⁶, որը երախտագիտությամբ նվիրում է իր ուսուցչին՝ Ստ. Պալասանյանին: Ժողովածուի հրատարակման գործում Նավասարդյանին խորհուրդներով օգնել են Գ. Տեր-Ալեքսանդրյանցը և Պ. Պոռշյանը:

Ձեռնարկելով բանահյուսական ժողովածուների հրատարակությունը, Նավասարդյանի նպատակը եղել է. «Հայ ժողովրդյան մեջ ցիրուցան եղած վեպերը և ավանդությունները ժողովել և իբրև «հում նյութ» առաջարկել հնագետներին և բանասերներին, թողնելով նոցա քննության և հետազոտության»¹⁷:

Նավասարդյանի հրատարակած առաջին և երկրորդ գրքերում արտացոլված կյանքը, կենցաղը, վարքն ու բարքը, հոգեբանությունը, վիշտն ու ցավը մոտ ու հարազատ էին ժողովրդին և հեղափոխմբ էին ընթերցվում: Իսկ հեքիաթին հատուկ պատմողական տարրը հետաքրքիր ու դուրամբռնելի էր դարձնում այն: Հավանաբար այս նկատի ունեւ Նավասարդյանը, երբ գրում էր. «Առայժմ ձեռնարկել եմ հեքիաթների հրատարակության, հուսալով, որ հեքիաթները մեր ժողովրդյան մեջ (գոնե այն նահանգում, որի բարբառով գրված են նոքա) նաև իբրև ընթերցանության հետաքրքիր նյութ ևս կարող են ծառայել»¹⁸:

1883 թ. Երևանում լույս է տեսնում Նավասարդյանի «Հայ ժողովրդական ավանդություններ» ժողովածուն, որտեղ ներառված է ավանդական բանահյուսությունն ընդհանրապես՝ հանելուկներ, անեծքներ, օրհնություններ, երգումներ, շուտասելուկներ, փաղաքշական խոսքեր, առածներ, հարսանեկան-ծիսական երգեր:

1884 թ. Թիֆլիսում հրատարակվում է Նավասարդյանի հավաքած «Հայ ժողովրդական հեքիաթների» երրորդ գիրքը, ուր արարատյան բարբառով գրառած երկու հեքիաթներից բացի, կան նաև ժողովրդական մի շարք նրբեր:

1888 թ. Ժնևից վերադառնալուց հետո, դարձյալ Թիֆլիսում, Նավասարդյանը հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթների» չորրորդ գիրքը, որը պարունակում է արարատյան բարբառով հեքիաթների մի շարք: Այս գրքում դիմելով հայ ուսուցիչներին, նա խնդրում է շարունակել բանահյուսական նյութերի գրառումները, պահպանելով բարբառային բոլոր առանձնահատկությունները:

Նավասարդյանի ժողովածուներին զուգընթաց՝ այդ նույն տարիներին լույս են տեսնում բանահյուսական բազմաթիվ այլ ժողովածուներ, որոնք, սակայն ունենին լուրջ թերություններ. նյութերի ընտրության մեջ չկար որո-

¹⁶ Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք I, Վաղարշապատ, 1882, էջ 63:

¹⁷ Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք II, Երևան, 1882, էջ Բ:

¹⁸ Նույն տեղում:

շակի սկզբունք, դրանք հավասարապես բոլոր գավառներին չէին վերաբերում կամ էլ միակողմանի էին: Ժողովրդագիտության հարաճուն պահանջները առաջադրում էին նյութի նկատմամբ խիստ մասնագիտական վերաբերմունք: Այդ պահանջը բավարարելու նպատակով Գրիգոր խալաթյանը, հետևելով ռուս և եվրոպական բանահյուսության տեսություններին, 1887 թ. մոսկվայում հրատարակում է «Ծրագիր հայ ազգագրության» գիրքը, որը հայ բանահավաքչությունը միասնական սկզբունքների ենթարկելու և մասնագիտական մակարդակի հասցնելու առաջին լուրջ փորձն էր:

Տիգրան Նավասարդյանը հետևել է խալաթյանի դրույթներին: Նրա հետագա հրատարակած գրքերը աչքի են ընկնում նյութերի ժանրային և ազգագրական շրջանների լայն ընդդրվածք, որոշակի համակարգով, 1889 թ. Թիֆլիսում հրատարակված «Հայ ժողովրդական հեքիաթներին» հինգերորդ հատորը, ի տարբերություն նախորդների, պարունակում է այլ բանահավաքների ժողոված նյութերը՝ բանահավաքի, մասամբ էլ ասացողի անվան և հայրենիքի հիշատակումներով:

1890 թ. հրատարակված «Հայ ժողովրդական հեքիաթներին» 6-րդ հատորը աչքի է ընկնում նյութի թարմությամբ: Բացի հեքիաթներից, ժողովածուն պարունակում է Հայաստանի զանազան գավառներից (Վան, Ալաշկերտ, Աստապատ, Բայազետ, Գանձակ) գրառած նյութերը: Այստեղ հետաքրքրական են մանկական խաղերի նկարագրությունները՝ ծիսային երգերին կից տրվող նկարագրությամբ: Նավասարդյանը քաջ գիտակցել է նաև բանահյուսական նյութերի տարբերակների նշանակությունը: Հիշյալ ժողովածուի մեջ հրատարակված «Ջրօրհների երգի» ծանոթագրության մեջ մասնավորապես հիշատակվում է. «Այս երգը երգում են Գանձակի նահանգի խաչակապ գյուղում: Թեև Վաղարշապատում նույնը երգվում է փոքր-ինչ փոփոխված, որ մենք զետեղել ենք սորանից առաջ, բայց ավելորդ չհամարեցինք հրատարակել և սույն երգը որպես առանձին ժողովրդի մտավոր ծրնունդ»¹⁹:

Հարևան սկզբունքներով են հրատարակված «Հայ ժողովրդական հեքիաթներին» մյուս պրակները (7-րդ՝ 1891 թ., 8-րդ՝ 1894 թ., 9-րդ՝ 1902 թ., 10-րդ՝ 1903 թ.)²⁰:

1903 թ. Նավասարդյանը հրատարակում է «Բառգիրք արարատյան բարբառի» արժեքավոր հետազոտությունը, որը, ըստ հեղինակի վկայության, պարունակում է «յուր մեջ բացի բուն ժողովրդական բառերից, ոճերից ու դարձվածքներից, նաև այն դժվարիմաց բառերի բացատրությունները, որոնք հանդիպում են մեր մինչև այսօր հրատարակած (արարատյան բարբառով) ավանդությունների մեջ»²¹:

Բառարանում տեղ գտած ոճերի և դարձվածքների հետ միասին բերված են նաև գյուղատնտեսական գործիքների ու դրանց առանձին մասերի, թրուչունների ու այլ կենդանիների, բույսերի ու պտուղների, ծառ ու ծաղկի տար-

¹⁹ Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, դիրք 6, Թիֆլիս, 1890, էջ 105:

²⁰ «Հայ ժողովրդական հեքիաթներին» 11-րդ գիրքը ձեռագիր վիճակում պահվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության արխիվում:

²¹ «Բառգիրք արարատյան բարբառի», Թիֆլիս, 1903, Առաջաբան:

բեր տեսակների բուն ժողովրդական-բարբառային բազմատեսակ անուններ, որոնք գրական լեզվում համարյա չկան:

Տիգրան Նավասարդյանը բանահյուսական նյութերի հրատարակությամբ փաստորեն նպաստել է նաև մեր գավառաբարբառների գրառմանը: Մանուկ Աբեղյանը բարձր է գնահատել Տ. Նավասարդյանի ծառայությունը հայ բարբառագիտության ասպարեզում և արարատյան բարբառով գրառած բնագրերը դիտել է որպես հիշյալ բարբառի շեշտադրության արժանահավատ ու վստահելի աղբյուրներ²²:

Իր ժողովրդագիտական ու հրատարակչական ողջ գործունեության ընթացքում Տիգրան Նավասարդյանը հրատարակել է մոտավորապես 80 հեքիաթ (որից 41-ը արարատյան, 8-ը՝ Ղրիմի, 8-ը՝ Լոռու, 11-ը՝ Ղարաբաղի, 4-ը՝ Վանի, 7-ը՝ Աստապատի բարբառներով), ավելի քան 209 հանելուկ, 304 անեծք, 145 օրհնություն, 54 աղոթք, 34 երգում, 18 շուտասուիկ, 46 փաղաքշական խոսք, 1360 առած, 548 մականուն (Վաղարշապատից), 47 մանկական խաղ, 68 ջանգյուղում, 69 ժողովրդական երգ և մեծ քանակությամբ ազգագրական նյութեր (ծես, հավատալիք, նախապաշարմունք): Նա ունի նաև անտիպ նյութեր, որոնք պահվում են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվային ֆոնդերում:

Տ. Նավասարդյանը իր ժողովրդագիտական գործունեությամբ արեւելահայ իրականության մեջ ամենանշանավոր դեմքն է: Եվ միանգամայն իրավացի էր Մակար Բարխուտարյանցը գրելով՝ «Հավանական է, որ մոտ ապագայում երկու մականուն, Սրվանձտյան և Նավասարդյան, Նավասարդյան և Սրվանձտյան միշտ միմյանցից անբաժան պիտի կրկնվին, կրկնվին նրա համար, որ երկու ժրջան և հավատարիմ մշակ հասկացած լինելով ժողովրդական երգերի, ավանդությունների, հեքիաթների ճշգրիտ նշանակությունը, ամենայն խոչընդոտներին և դժվարություններին հաղթահարելով, դիմում են իրենց նպատակին»²³:

ТИГРАН НАВАСАРДЯН — ФОЛЬКЛОРИСТ И СОБИРАТЕЛЬ ФОЛЬКЛОРА

СВЕТЛАНА ВАРТАНЯН

Резюме

В 70-ых годах XIX в. Тигран Навасардян сыграл большую роль в деле собирания фольклорных материалов армянского народа. Он и Г. Срвандзтян являются основоположниками этой области армянского устного творчества.

Начало его деятельности относится к 1876 г. С 1881 г. Тигран Навасардян неоднократно выступал в периодической печати с призывом собирать и записывать фольклорные материалы армянского народа. Итогом его деятельности был 10-томник армянских народных сказок, опубликованный в 1882—1903 гг. Им были изданы также словарь аратского диалекта (1903 г.) и «Армянские народные предания» (1883 г.).

²² «Նոր դար», 1890, № 143.

²³ Մ. Վ. Բարխուտարյանց, Համով հոտով, երկասիրեց Գ. Սրվանձտյանց (Նոր դար, 1885, № 51):